Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա, Հայաստանի Կենսաբանական Հանդես
Национальная Академия Наук Армении, Биологический Журнал Армении
National Academy of Sciences of Armenia, Biological Journal of Armenia

Օրիգինալ հոդվածներ • ***Оригинальные статьи*** • ***Original articles***

Биолог. журн. Армении, 3 (55), 2003

УДК 502.656.556.5(479).25

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՎԼԱԴԻՄԻՐ Մ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ վարչապետի խորհրդական, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կառավարության շենք

Ջրային ռեսուրսների ապահովումը հանդիսանում է առավել կարևոր և կենսականորեն անհրաժեշտ խնդիր, առանց որի հնարավոր չէ լուծել Հայաստանի պարենային, էներգետիկ և էկոլոգիական ծրագրերը:

Ամփոփված է տվյալ հիմնահարցի ժամանակակից իրավիճակը և հիմնավորված են նրա ռացիոնալ լուծման եղանակները ժամանակակից մոտեցումների և գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների հիման վրա, հաշվի առնելով այդ բնագավառում միջպետական և միջազգային համագործակցության հեռանկարները:

Հեղինակը, որն ակտիվորեն մասնակցել է այդ բնագավառի միջոցառումների իրացմանը, ինչպես նաև քննարկվող հարցի վերաբերյալ միջպետական բանակցություններին, հիմնավորում և ներկայացնում է առաջարկներ Հայաստանում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, տնօրինման և նրանց ռացիոնալ օգտագործման նպատակով հատուկ Համապետական ծրագրի մշակման անհրաժեշտության մասին: Հատուկ ուշադրություն է դարձվում Սևանա լճի ջրային ռեսուրսների պահպանմանը և ռացիոնալ օգտագործմանը:

Обеспечение водными ресурсами является наиболее важной и жизненно необходимой проблемой, без разрешения которой невозможно решение производственной, энергетической и экологической программ Армении.

Обобщено современное состояние данной проблемы и обоснованы пути ее рационального решения на основе современных подходов и достижений научно-технического прогресса с учетом перспектив межгосударственного и международного сотрудничества в этой области.

Автор, принимавший активное участие в реализации мероприятий в этой области, а также в межгосударственных переговорах по рассматриваемой проблеме, обосновывает и представляет предложения для разработки в Армении целевой Государственной программы по эффективному управлению, владению водными ресурсами и их рациональному использованию. Особое внимание уделяется охране и рациональному использованию водных ресурсов озера Севан.

Water-supply and security is the key and vital problem for Armenia and the background for solution of Food/Feed, Energetic and Ecological programs in the Republic.

Actual situation of this problem has been presented and rational approaches for its realization in Armenia have been analyzed in detail with the emphasis of scientific and technical progress in this field as well as interstate and international co-operation.

The author, actively engaged in realization of measures in this field and in interstate

negotiations on problem discussed analyzes and presents proposals for development in Armenia the State Program for effective management, maintenance of water resources and their rational use. The special attention is paid to the protection and rational use of water resources of the Lake Sevan.

Водные ресурсы Армении - водопользование - озеро Севан

Այսօր մարդկության առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրների թվին են պատկանում պարենային, վառելիքաէներգետիկ, էկոլոգիական և ջրային (հատկապես քաղցրահամ) պրոբլեմները, որոնք 21-րդ դարում էլ կմնան որպես մարդկությանը հուզող գերխնդիրներ: Հարավային Կովկասում, հատկապես Հայաստանում, ի թիվս վերոհիշյալ պրոբլեմների, ամենալրջագույնը կա և կմնա ջրային ռեսուրսների տնօրինման, կառավարման և օգտագործման խնդիրը, առանց որի հնարավոր չէ լուծել պարենային, էներգետիկ և էկոլոգիական պրոբլեմները:

Հայաստանի Հանրապետությունը սակավահող և սակավաջուր երկիր է, որը գտնվում է Հարավային Կովկասում և սահմանակցում է Վրաստանին, Ադրբեջանին, Իրանին և Թուրքիային: Ցամաքի բարձրությունը տատանվում է սկսած Դեբետ գետի ավազանից 375 մետր ծովի մակերևույթից բարձր նիշից, մինչև Արագած լեռան առավելագույն 4090 մետր բարձրության սահմանանիշը: Երկրի տարածքի 75 տոկոսը գտնվում է ծովի մակերևույթից ավելի քան 1500 մետր բարձր մակարդակի վրա, այն դեպքում, երբ աշխարհի բնակչության միայն 5 տոկոսն է բնակվում ծովի մակերևույթից 1000 մետր և ավելի բարձր տարածքների վրա:

Բնական ջրային ռեսուրսների առումով Հայաստանը հարևան երկրների համեմատությամբ գտնվում է առավել անբարենպաստ պայմաններում: Հայաստանում տարեկան միջին հաշվով յուրաքանչյուր շնչին բաժին է ընկնում 2700 խորանարդ մետր ջուր, այն դեպքում, երբ Ադրբեջանում և Վրաստանում այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 3800 և 11600 խորանարդ մետր: Հայաստանի ջրային ռեսուրսները ձևավորվում են Կուր գետի ավազանում: Կուր գետի ավազանը ներառում է 204 հազար քառակուսի կիլոմետր տարածության, որից Հայաստանի տարածքը 29,8 (երկրի տարածքի 100 տոկոսը), Ադրբեջանինը համապատասխանաբար 69 (79 տոկոս), Վրաստանինը 36 (52 տոկոս), Թուրքիայինը 29 հազար քառ. կմ և Իրանինը 40 հազ. քառ. կմ:

Ջրային ռեսուրսները Կուր գետի ավազանում միջին տարեկան կտրվածքով գնահատվում են 30,5 խոր. կմ, որից մակերեսային հոսքը 27,3 խոր. կմ և ստորգետնյա ջրերինը 3,2 խոր. կմ: Դրանցից ձևավորվում են (միջին ջրապահովածության տարում) Վրաստանի տարածքում 10,7 խոր. կմ (35 տոկոս), Հայաստանի տարածքում 7,3 (24 տոկոս), Ադրբեջանում 7,9 (26 տոկոս), Թուրքիայի և Իրանի տարածքում 4,6 խոր. կմ (15 տոկոս): Քանի որ Հայաստանի տարածքի միջին նիշը (ծովի մակերևույթից բարձր) կազմում է 1818 մետր և Հայաստանի ջրերը ամբողջությամբ արտահոսում են նրա սահմաններից դուրս և գրեթե ոչ մի գետ հարևան երկրներից չի ներհոսում հանրապետության տարածք ջրային ռեսուրսների տնօրինման օգտագործման և կառավարման հարցերը դառնում են ազգային նշանակության կարևորագույն գերխնդիր: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության ջրային ռեսուրսների

կայուն կառավարման բնագավառում դեռևս կան մի շարք հիմնախնդիրներ, որոնք արմատական լուծում են պահանջում: Էական թերություններ կան ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կառավարման բնագավառում: Բավական է ասել, որ ամեն միջին ջրապահովված տարի 7,3 մլրդ խոր. մետր ջրային ռեսուրսներից օգտագործվում է ընդամենը 2,5-2,6 մլրդ խոր. մետրը, կամ պաշարների միայն 34-35 տոկոսը:

Նման իրավիճակում ջրօգտագործման միջհանրապետական և միջպետական խնդիրների լուծումն ու համակարգումը ունեն չափազանց կարևոր նշանակություն, քանի որ դրանք անմիջապես առնչվում են ջրի ազգային պաշարի մեծության հետ: Ջրային ռեսուրսների պահպանումն ու տնօրինումը կան ու առաջիկայում էլ կմնան որպես ազգային նշանակության կարևորագույն գերխնդիր:

Հայաստանը ցամաքով շրջափակված երկիր է և գրեթե բոլոր գետերը հոսում են դեպի հարևան երկրներ: Ուստի ջրային պաշարների տնօրինման և օգտագործման միջպետական փոխհարաբերություններում, ինչպես նաև միջազգային համագործակցության շրջանակներում հանրապետության շահերի պաշտպանությունը դառնում է ազգային անվտանգության ապահովման ամենահիմնական խնդիրներից մեկը:

Ինչպես նշվեց, Հայաստանի տարածքը ամբողջությամբ գտնվում է Կուր գետի ավազանում: Հանրապետության ջրային պաշարները Կուր գետի և նրա Արաքս վտակի միջոցով դրենաժվում, արտահոսում և թափվում են Կասպից ծով:

Դեբեդ գետի միջոցով արտահոսքը Վրաստան գնահատվում է 890 մլն խմ/տարի: Հյուսիս-արևելյան արտահոսքերը դեպի Ադրբեջան տարբեր գետերի միջոցով կազմում են 555 մլն խմ/տարի: Հարավ-արևելքում Արաքս գետի վտակների միջոցով (Արփա, Որոտան, Ողջի և այլն) ուղղակի հոսքը Ադրբեջան կազմում է 1,791 մլն խմ/տարի, մի քանի ստորերկրյա ջրերի ջրապարունակ հորիզոններ բաժանվում են Թուրքիայի հետ, որոնցից ամենակարևորը Արարատյան հարթավայրի ջրապարունակ հորիզոնն է:

Հայտնի է, որ Խորհրդային Միության տարիներին միջհանրապետական ջրային հիմնախնդիրները լուծվում էին ԽՍՀՄ Պետպլանի և ԽՍՀՄ մելիորացիայի և ջրային տնտեսության նախարարության կողմից: Ջրային պաշարների միջհանրապետական խնդիրների քննարկման ժամանակ հաշվի էր առնվում նաև միութենական հանրապետության Նախարարների խորհրդի կարծիքը: Ջրային պաշարների միջպետական հարցերը քննարկվում և կարգավորվում էին ԽՍՀՄ կառավարության կողմից: Նախկին Խորհրդային Միության տարիներին կնքվել են մի շարք երկկողմանի պայմանագրեր, որոնց շրջանակներում Հայաստանը պարտավորություններ ունի միջազգային ջրերի զարգացման և օգտագործման առնչությամբ: Հայաստանը պայմանագիր ունի Թուրքիայի հետ Արաքս և Ախուրյան գետերի օգտագործման վերաբերյալ (1927 թ. հունվարի 8-ի կոնվենցիա): Պայմանագրի համաձայն այս երկու անդրսահմանային գետերի ջրերը բաշխվում են հավասարաչափ համամասնությամբ: Թուրքիայի հետ կա նաև մեկ այլ պայմանագիր Ախուրյան գետի պատվարի և ջրամբարի համատեղ շահագործման մասին, որի տարողությունը 525 մլն խմ է: Հայաստանի և Իրանի միջև գոյություն ունի Արաքս գետի սահմանամերձ հատվածներում ջուրը ոռոգման, էլեկտրաէներգիայի արտադրության և կենցաղային նպատակներով

համատեղ օգտագործելու մասին (1957 թ. օգոստոսի 11) համաձայնագիր, ըստ որի անդրսահմանային գետի ջուրը հավասարաչափ համամասնություններով սահմանային հատվածներում բաշխվում է (50%) Իրանի և Հայաստանի միջև: Չնայած այս պայմանագրերը կնքվել են ԽՍՀՄ-ի կողմից, այնուամենայնիվ Հայաստանը համարվում է ՀԽՍՀ-ի իրավահաջորդ երկիրը և հետևաբար պարտավորված է կատարելու դրանց համապատասխան դրույթները:

Այդ տարիներին կնքվել են նաև Դեբեդ գետի օգտագործման մասին պայմանագիրը (1971թ. նոյեմբերի 5), որը սահմանել է Հայաստանի և Վրաստանի չափաբաժինները, ինչպես նաև Արփա, Որոտան և Աղստև գետերի օգտագործման պայմանագրերը, որոնցով կարգավորվել են Հայաստանի և Ադրբեջանի ջրօգտագործման չափաքանակները: Այս համաձայնագրերը ընդունվել են նախկին ԽՍՀՄ կառավարության կողմից, սակայն դրանց դրույթները այսօր էլ կիրառվում են: Միջհանրապետական ջրային պաշարների օգտագործման ուրվագծերը (սխեմաները), ինչպես նաև առանձին ոռոգման համակարգերի կառուցման նախագծերը միութենական մակարդակով քննարկման ժամանակ Ադրբեջանը մշտապես ներկայացնում էր մի շարք տարաձայնություններ, որոնց հաղթահարելը մեծ ջանքեր ու հիմնավորումներ էին պահանջում: Դա պայմանավորված էր նրանով, որ նախ շոշափվում էին հանրապետությունների տնտեսության զարգացման շահերը, մյուս կողմից, առանց այդ ուրվագծերի ու նախագծերի հաստատման ԽՍՀՄ Պետպլանը չէր ֆինանսավորում ջրային օբյեկտների շինարարությունն ընդհանրապես:

Ջրօգտագործման միջպետական և միջազգային հարցերում ճիշտ կողմնորոշվելու և վճիռներ կայացնելու նպատակով հարկ եմ համարում լուսաբանել ջրային պրոբլեմների բաշխման հետ կապված միջհանրապետական վիճահարույց պրոբլեմներից մի քանիսը, որոնց քննարկման մասնակիցն եմ եղել:

1. 1980 թվականին ԽՍՀՄ կառավարության հանձնարարությամբ միութենական Պետպլանը ծեռնամուխ էր եղել Անդրկովկասի, մասնավորապես Կուր գետի ավազանի, ջրային պաշարների համալիր օգտագործման և պահպանման սխեմայի քննարկմանը: Որն էր դրա իմաստը: Քանի որ ջրատնտեսական օբյեկտների նախագծումն ու կառուցումը ֆինանսավորվում էին միայն կենտրոնական մարմինների կողմից, պետք է նախ սխեմա կազմվեր, թե Կուր գետի ավազանում գտնվող անդրկովկասյան հանրապետությունները, նաև Թուրքիան ու Իրանը ինչ ջրային պաշարներ ունեն և յուրաքանչյուրը ինչքան ջուր պիտի օգտագործի: Եվ այդ սխեմայի կազմումից ու հաստատումից հետո միայն հնարավոր կլիներ ակնկալել, թե ջրամբարների և ջրային համակարգերի կառուցման համար ֆինանսական ու նյութական ինչքան միջոցներ պիտի հատկացվեն: Ահա թե ինչու մենք մեծ ջանքեր գործադրեցինք այդ սխեմայի կազմման ու քննարկման ուղղությամբ: Նշեմ, որ գլխավոր սխեման կազմվել էր ԽՍՀՄ մելիորացիայի և ջրային տնտեսության նախարարության պատվերով, որն իրականացրել էր Ադրբեջանի «Հիդրոնախագիծ» ինստիտուտը, իսկ մեր և Վրաստանի նույնանուն նախագծային ինստիտուտները համարվել էին ենթանախագծողներ:

Ինչպես վերը նշված է, Կուր գետը ավազանի պաշարների իմաստով ունի 30,5 միլիարդ խմ ջուր: Հայաստանի բաժնեմասը այդտեղ կազմում է 7,3 միլիարդ խմ: Մյուս առանձնահատկությունն այն է, որ Կուր գետի ավազանում մեր

հանրապետության տարածքը ընդգրկված է ամբողջապես, մինչդեռ Ադրբեջանի տարածքի ընդգրկումը կազմում է 79 տոկոս, իսկ Վրաստանինը 52: Այսպիսով, եթե միջհանրապետական ջրաբաժանումը կատարվեր անհիմն, կամային, ավելի շատ կվնասեր մեր հանրապետությանը, որը ամբողջապես Կուր գետի ավազանի մեջ է: Կուր գետի գլխավոր սխեման քննարկում էր ԽՍՀՄ Պետպլանի հատուկ փորձագիտական հանձնաժողովը: Մենք հանձնաժողովի հետ սկսեցինք, իրոք, տաժանակիր աշխատանք, որովհետև պետք է հիմնավորեինք, թե ինչու և ինչքան ջուր է հարկավոր Հայաստանին: Իսկ դա այնքան էլ հեշտ գործ չէր, թեև մենք ունեինք ծանրակշիռ փաստարկներ: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Կուր գետի սխեմայում զգալի չափով մեծացված է Ադրբեջանին հատկացվելիք ջրի բաժինը, քանի որ միջհանրապետական ջրաբաժանման հաշվարկներում արհեստականորեն ավելացվել էին ոռոգելի հողերի տարածությունները և լճակային ձկնաբուծության համար պահանջվելիք ջրի քանակությունը: Համաձայնվել նման հաշվարկների հետ մենք, իհարկե, չէինք կարող, որովհետև դրանք բերելու էին Հայաստանի բաժին ջրի կտրուկ նվազեցմանը:

Ամենալուրջ փաստարկը այն էր, որ սխեմայում ջրաբաժանության հարցը լուծելիս, հաշվի չէր առնվել նաև Սևանա լճի մակարդակի բարձրացման խնդիրը, քանի որ Ադրբեջանը կտրուկ դեմ էր դրան: Եվ եթե չենք որոշում Սևանի պահպանության և մակարդակի բարձրացման համար պահանջվելիք ջրային պաշարների հատկացման հարցը, ապա Կուր գետի սխեմայի հետ համաձայնության խնդիրը մեզ համար օրակարգից դուրս էր գալիս: Եթե, օրինակ, ցանկանում ենք Սևանի մակարդակը 6 մետրով բարձրացնել, ապա լիճ պետք է տեղափոխենք 8-9 միլիարդ խմ ջուր:

Այս փաստարկները փորձագիտական հանձնաժողովի ուշադրությանն արժանացան: Ներկայացված սխեման չհաստատվեց: Միաժամանակ հանձնարարվեց ԽՍՀՄ Հիդրոմետպետկոմին և Միության մելիորացիայի և ջրային տնտեսության նախարարությանը համատեղ շարունակել Կուր գետի ավազանի «հիդրոլոգիական տարի» ծրագրի ուսումնասիրումն ու անցկացումը: Մելիորացիայի և ջրային տնտեսության նախարարությանը հանձնարարվեց կազմել Սևանա լճի բնական պաշարների պահպանման և օգտագործման համալիր ծրագիր: Այսինքն, Կուր գետի գլխավոր սխեման հաստատել Սևանա լճի պահպանության սխեման հաստատելուց հետո: Սա շատ մեծ ձեռքբերում էր: Սակայն ծագեց մի նոր խնդիր: Եթե Կուր գետի սխեման չի հաստատվում, փաստորեն անորոշ ժամանակով դադարեցվում են տարածաշրջանում ջրաշինարարական աշխատանքները: Ուստի մենք առաջարկեցինք, որ այն օբյեկտները, որոնք ջրային գործոնի առումով սահմանափակումներ չունեն (այսինքն երեք հանրապետություններն էլ չեն առարկում դրանց շինարարությունը սկսելու համար), մինչև Կուրի և Սևանի սխեմաների հաստատումը, նախագծվեն և թույլատրվեն կառուցման համար: Այդ առաջարկությունը ևս ընդունվեց: Մեր հանրապետությունից թույլատրվեց շինարարության պլանների մեջ մտցնել 5 օբյեկտ Թալինի ոռոգման համակարգը, Եղվարդի ջրամբարը, Որոտանի հիդրոհանգույցը, Արմանիսի և Արշալույսի ջրամբարները: Համեմատության համար նշեմ, որ Ադրբեջանին թույլատրվեց կառուցել 4 օբյեկտ, որից մեկը ջրամբար, Վրաստանին 3:

Այսպիսով, նպատակասլաց և համառ աշխատանք տարվեց, որպեսզի մեր

հանրապետության ջրային պաշարները պահվեին Հայաստանում: Այնուհետև մենք ձեռնամուխ եղանք վերոհիշյալ օբյեկտների նախագծմանն ու կառուցմանը: Կուր գետի ջրային պաշարների օգտագործման խնդիրը այսօր էլ չափազանց կարևոր է: Ցավոք TASIS-ի կողմից իրականացվող Կուր և նրա վտակ Արաքս գետերի ջրային ավազանների պաշարների կառավարման և մոնիտորինգի ծրագիրը, որը չափազանց կարևոր է Հայաստանի Հանրապետության համար, իրականացվում է առանց մեր կողմի ակտիվ մասնակցության: Այս գործում հապաղել չի կարելի: Անհրաժեշտ է կտրուկ միջոցներ ձեռնարկել ծրագրի մշակմանը հանրապետության մասնակցությունը ակտիվացնելու ուղղությամբ:

2. 1980-ական թվականներին սկսվեց Որոտանի հիդրոհանգույցի նախագծումը, որի տեխնիկատնտեսական հիմնավորումն արդեն կար: Նախատեսվում էր Որոտանի 21,6 կմ երկարության թունելով Սպանդարյանի ջրամբարից տարեկան 165 մլն խմ ջուր բերել Կեչուտի ջրամբար, այնտեղից Արփա-Սևան թունելով Սևանա լիճ տեղափոխելու համար: ՀՀ կառավարությունը հարց բարձրացրեց ԽՍՀՄ կառավարության առջև՝ թույլատրել Որոտանի հիդրոհանգույցի շինարարությունը տեխնիկատնտեսական հիմնավորման հիման վրա, մինչև տեխնիկական նախագծի հաստատելը: Միութենական կառավարությունը հանձնարարեց ԽՍՀՄ Պետպլանին հարցը քննարկել և առաջարկություն տալ: 1981 թ. ապրիլին Պետպլանը, քննարկելով ՀՀ կառավարության առաջարկը, համաձայնություն տվեց սկսելու շինարարությունը և որոշման նախագիծը ներկայացրեց ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ:

Ադրբեջանական կողմը ԽՄԿԿ Քաղբյուրոյի անդամ Հ. Ալիևի օգնությամբ բողոք ներկայացրեց ԽՍՀՄ կառավարություն: Հանձնաժողով հավաքվեց կառավարության նախագահի տեղակալ Զ. Նուրիևի մոտ: Հայաստանը ներկայացնում էի ես: Ադրբեջանական կողմի առարկության գլխավոր փաստարկը նորից խարսխված էր այսպես կոչված ազգային գործոնի վրա: Իբր թե Որոտանի ստորին հատվածում ապրող քրդերը կարող են հիվանդագին ընդունել այդ կառույցի շինարարությունը, որը նեղ կացության մեջ կդնի Ադրբեջանին՝ ազգամիջյան խնդիրների և սանիտարական իմաստով: Տեղյակ պահվեց, որ Կուբաթլիի բնակիչները՝ բոլորը ադրբեջանցիներ են և անձնագրերում էլ այդպես գրված է: Մենք կրկին հիշեցրինք, որ Որոտան (Բազարչայ) գետի ամբողջ հոսքը 1388 մլն խմ է: Ինչ սանիտարական աղետ կարող է առաջանալ, եթե այդ ծավալից ընդամենը 165 մլն խմ ջուր վերցնենք Սևանի համար, որի վիճակը աղետալի է: Հանձնաժողովը համաձայնեց մեր առաջարկության հետ: Քննարկումներից հետո 1981 թ. ապրիլի 18-ին ստորագրվեց արձանագրություն (հ. ծ. 1468), որտեղ թույլատրվեց սկսել Որոտանի հիդրոհանգույցի շինարարությունը, ինչպես նաև ամրագրվեց Որոտանի ամողջ հոսքը (1,388 մլն խմ) 50-ական տոկոսով Հայաստանի և Ադրբեջանի միջև բաժանելը: Հիմք ընդունելով հանձնաժողովի արձանագրությունը՝ ԽՍՀՄ կառավարությունն ընդունեց N 725 որոշումը Որոտանի հիդրոհանգույցի շինարարության մասին, որը շահագործման կհանձնվի 2003 թվականին:

3. Այդ տարիներին Ադրբեջանը Իրանի հետ միասին Արաքս գետի վրա սկսել էր Խուդաֆերինի հիդրոհանգույցի շինարարությունը: Այս անգամ մենք նամակ ուղարկեցինք ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ, բողոքելով, որ կառույցի շինարարությունը չի համաձայնեցված Հայաստանի կառավարության հետ: ԽՍՀՄ

կառավարությունը 1982 թ. ապրիլին (N կկ 9006) հանձնարարեց ԽՍՀՄ Պետշինին, Պետպլանին և Մելիորացիայի և ջրային տնտեսության նախարարությանը քննարկելու հարցը: Քննարկումը ցույց տվեց, որ իրոք այդ հիդրոհանգույցի ջրի ծավալը չի համապատասխանում Ադրբեջանին հասանելիք ջրային պաշարներին: Կազմվեց համապատասխան փաստաթուղթ, որով Խուդաֆերինի հիդրոհանգույցի ջրատարողությունը պետք է կրճատվեր 200 մլն խմ-ով: Որոշվեց, որ այդ հիդրոհանգույցը, ինչպես նաև Ադրբեջանում Արաքս գետի վրա կառուցվող հիդրոտեխնիկական և ջրատնտեսական մյուս օբյեկտների շինարարությունը չպետք է ազդի Հայաստանում այն ջրամբարների ստեղծման ու ջրատնտեսական օբյեկտների շինարարության վրա, որոնք նախատեսված են ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության 1977 թ. հոկտեմբերի 13-ի «Հայաստանում ոռոգելի հողագործության հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման միջոցառումների մասին» N 925 և 1978 թ. սեպտեմբերի 28-ի «Սևանա լճի բնական պաշարների պահպանման և արդյունավետ օգտագործման միջոցառումների մասին» N 812 որոշումներով:

Այս ամենը մեկ անգամ ևս հաստատում են այն ճշմարտացի միտքը, որ ջրային ռեսուրսների տնօրինումը, տիրապետումը և օգտագործումը ունեն վիթխարի նշանակություն, ինչպես մեր երկրի, այնպես էլ յուրաքանչյուր երկրի համար: ՀՀ կառավարության խնդիրն է մշակել համապատասխան ծրագրեր ուղղված ազգային ջրային պաշարի լրիվ և արդյունավետ օգտագործման խնդիրների լուծմանը:

Հատկանշական է, որ ՀՀ ջրային օրենսգիրքը սահմանել է անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանման պայմանները: Մասնավորապես սահմանված է, որ հանրապետության տարածքում ձևավորվող անդրսահմանային ջրային ռեսուրսների նկատմամբ, մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատելը, կիրառվում են ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսվող նորմերը: Իսկ անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության պայմանները պետական սահմանի վրա սահմանվում են Հայաստանի Հանրապետության և սահմանակից երկրների միջպետական համաձայնագրերով կամ պայմանագրերով:

Ջրօգտագործման բնագավառում մեզ անհրաժեշտ է շարունակել հարևան երկրների հետ փոխշահավետ համագործակցությունը: Այսօրվա դրությամբ հրատապ խնդիր է բանակցություններ վարել Թուրքիայի հետ Սուրմալուի ջրամբարի շինարարության շուրջ, որը երկուստեք շահավետ պայմանագիր է: Ջրամբարի նախատեսվող ծավալը 600 մլն խմ է, ՀԷԿ-ի հզորությունը 96 ՄՎՏ է:

Անդրսահմանային ջրային պաշարների համատեղ օգտագործման օպերատիվ հարցերի լուծման համար անհրաժեշտ է ակտիվացնել համապատասխան պետական կառավարման մարմինների և մշտական գործող միջպետական հանձնաժողովների գործունեությունը:

Կարևորագույն խնդիր է նաև միջազգային պայմանագրերով սահմանված նորմերի կիրառումը, քանի որ ըստ ՀՀ ջրային օրենսգրքի 2-րդ հոդվածի, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են մեր ջրային օրենսգրքում, ապա գործում են միջազգային պայմանագրի դրույթները:

Հարկ է նշել, որ տարբեր փաստաթղթերում միջազգային ջրերի որակավորման միջազգային սահմանները տարբեր են: Ընդունված պայմանագրերի սահմանումից կախված տարբեր են նաև կիրառվելիք կանոնների օգտագործման շրջանակները: Վերոհիշյալ պայմանագրերից ամենագերիշխող փաստաթղթերը հետևյալներն են՝

• 1966 թ. Հելսինկիի կոնվենցիան միջազգային գետերի ջրերի օգտագործման մասին,

• ԵՏՀ 1992 թ. կոնվենցիան անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պահպանության և օգտագործման մասին,

• 1997 թ. ՄԱԿ-ի միջազգային ջրային հոսքերը նավարկության համար չօգտագործելու մասին օրենքը,

• 1997 թ. ՄԱԿ/ԵՏՀ անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կոնվենցիան:

GEF-ի շահագործողական ռազմավարության մեջ նշված է, որ «GEF-ի կողմից ֆինանսավորվող միջազգային ջրային գործունեությունների համընդհանուր ռազմավարական հիմքը կողմերի համաձայնեցված աճող ծախսերի բավարարումն է», որը նպատակ ունի օժանդակել երկրներին ավելի լավ պատկերացնելու շրջակա միջավայրի այն վտանգներն ու մտահոգությունները, որոնք վերաբերում են իրենց միջազգային ջրերին, ինչպես նաև ջրօգտագործման բնագավառում նրանց համագործակցությանը անդրսահմանային ջրերին առնչվող շրջակա միջավայրի խնդիրները հստակեցնելու և հասցեագրելու նպատակով: Միջազգային ջրային գործունեություններն ուժեղացնելու այլ նախաձեռնություններից կարելի է նշել, որ վերջերս Կովկասում գործող շրջակա միջավայրի տարածաշրջանային կենտրոնը (REC), որը հիմնադրվել է Վրաստանում, 1999 թ., հետևելու է մոնիտորինգի և տվյալների հավաքման խնդիրներին: Մեզ անհրաժեշտ է հստակեցնել մեր անելիքները այս կարևոր բնագավառներում ևս:

Ստացվել է 28.VII.2003